DOI:10.56653/18290361-2024.14-60

Գոռ Ղազարյան

Երևանի պետական համալսարան
gor.ghazaryan1998@gmail.com

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԴԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԱՆԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ՓՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ (1918 Թ.)*

Հիմնաբառեր. Գարեգին Նժդեհ, Նիկողայոս Մառ, Աշխարհբեկ Քալանթար, Անիի պեղումներ, հնագիտական գտածոներ, Ալեքսանդրապոլ, Մայիսյան հերոսամարտեր:

Ներածություն

Հայոց պետական ու ռազմական գործիչ Գարեգին Նժդեհը կարևոր դերակատարում է ունեցել պրոֆեսոր Նիկողայոս Մառի Անիի հնագիտական պեղումների հավաքածուն փրկելու գործում:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ներման արժանանալով ցարական կառավարության կողմից՝ Գ. Նժդեհը վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով (Նժդեհ 2021, 12): Կռիվների առաջին շրջանում Գ. Նժդեհը եղել է Հայկական կամավորական 2-րդ գնդի փոխհրամանատարը (գնդի հրամանատար՝ Դրաստամատ Կանայան), վերջին շրջանում՝ ղեկավարել հայ-եզդիական մի առանձին զորամաս (Նժդեհ 2021, 12): 1914 թ. սեպտեմբերի 23-ից մինչև 1916 թ. հունիսի 1-ը հայկական կամավորական 2-րդ գունդը մասնակցել է ավելի քան 40 տարբեր մարտերի ու մի շարք այլ ընդհարումների (Կարապետյան 2002, 35-36): Ցարական իշխանությունները 1916 թ. ցրում են Հայոց կամավորական գնդերը: 1917 թ. սկզբին Գ. Նժդեհը գալիս է Ալեքսանդրապոլ (Գյումրի) (Համբարձումեան 2001, 38): 1917 թ. սակավաթիվ ուժերով օգնության է հասնում պաշարված Կողբին (Հակոբյան և այլք 1998, 196)[1] և փրկում այդ շրջանի հայությանը (Համբարձումեան 2001, 38): 1918 թ. գարնանը Գ. Նժդեհը վարում է Ալաջայի կռիվները, որոնցով կարելիություն է ընձեռում Էրզրումից, Սարիղամիշից, Կարսից նահանջող հայկական զորամասերին անկորուստ անցնել Ալեքսանդրապոլ: Գ. Նժդեհն իր մարդկանցով ապահովում է նաև Ն. Մառի արշավախմբի կողմից Անիից հայտնաբերված արժեքավոր հնությունների փոխադրումը:

---

* Ստացվել է 08.07.2024, ուղարկվել է գրախոսման 09.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

1 Ավան(նաև շրջան) Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ճակատք գավառում, Արաքսի աջակողմյան վտակ Կողբ գետի ափին, Բարդող լեռան հյուսիս-արևելյան ստորոտին: Տե՛ս Հակոբյան և այլք 1998, 196:

Սույն հոդվածում փորձ է արվել պատմական սկզբնաղբյուրների և գիտական գրականության լույսի ներքո հետազոտել, վեր հանել և ներկայացնել վերոնշյալ իրադարձության մանրամասները և փրկված հնագիտական հավաքածուի հետագա ճակատագիրը: Ուրվագծվել է Գ. Նժդեհի կարևոր դերակատարումը Ն. Մառի Անիի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր նյութերի փոխադրման գործում, ինչպես նաև Գ. Նժդեհի կողմից պատմամշակութային հուշարձանների և հնագիտական նյութերի արժևորումն ու պահպանումը:

Գարեգին Նժդեհը և 1918 թ. թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս

1918 թ. հունվարի վերջին Թուրքիան, օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական զորքերը հեռացել են Կովկասյան ռազմաճակատից, խախտելով Երզնկայի զինադադարը[2] (Պետրոսյան 2016, 6), արշավանք է սկսում դեպի Անդրկովկաս (Այսրկովկաս)՝ նպատակ ունենալով արևմտահայության ցեղասպանությունից հետո բնաջնջել նաև արևելահայությանը, վերացնել հայկական «սեպը» և պայմաններ ստեղծել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման համար (Խուրշուդյան 1999, 28): Ռուսական զորքերի հեռանալուց հետո ռազմաճակատում թուրքական զորքերին դեմ հանդիման մնացին միայն հայկական զորամասերը (Սիմոնյան 2017, 60): Չնայած հայկական ուժերի դիմադրությանը՝ թվապես գերազանցող թուրքական բանակը հուժկու գրոհներով առաջ է շարժվում: Փետրվարի 27-ին թուրքական զորքերը գրավում են Էրզրումը, մարտի վեջերին՝ Վանը: Թուրքական բանակն առաջադրանք էր ստացել նվաճել ամբողջ Արևելյան Հայաստանը: 1918 թ. ապրիլին հայկական զորքերը թողնում են Սարիղամիշը և ամրապնդվում Կարսում: Թուրքական զորամասերն ուղղություն են վերցնում դեպի Կարս: Ստանալով Անդրկովկասի անկախության լուրը՝ թուրքական բանակի հրամանատարությունը պահանջում է անհապաղ հանձնել Կարսը (Սիմոնյան և այլք 2012, 513-514): Անդրկովկասի կառավարության կարգադրությամբ ապրիլի 12-ին (նոր տոմարով ապրիլի 25-ին) Կարսը հանձնվում է թուրքերին (Սիմոնյան և այլք 2012, 513-514): Հայկական զորքերը և բազմահազար հայ գաղթականությունը նահանջում են Ալեքսանդրապոլ: Գ. Նժդեհի ինքնակենսագրականում կարդում ենք հետևյալ տողերը. «Հայաստանի անկախութեան նախօրեակին վարել եմ Ալաջայի (բնակավայր Անիի շրջակայքում)[3] կռիւները, որոնցով կարելիութիւն ընձեռել էրզերում-Սարիղամիշ-Ղարսէն նահանջող հայկական զօրամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ և Արփաչայը (Ախուրյան գետ – Գ.Ղ.) կտրել անցել եմ միայն այն

2 1917 թ. դեկտեմբերի 5-ին ռուսական Կովկասյան բանակի և 3-րդ թուրքական բանակի հրամանատարությունների միջև Երզնկայում ստորագրվում է զինադադարի պայմանագիրը, որով դադարեցվում էին բոլոր տեսակի ռազմական գործողությունները: Կողմերը պայմանավորվում են մինչև վերջնական հաշտություն կնքելը անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում: Տես Պետրոսյան 2016, 6:

3 Բնակավայրը գտնվում է Անի քաղաքից 6,6 կմ հարավ-արևմուտք, Ալաջա լեռների արևելյան ստորոտում: Այստեղից էր սկսվում Անիի խմելու ջրի գլխավոր ջրատարը: Տես Հակոբյան և այլք 1986, 65:

ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինուորի հետ իմ մարդկանց յաջողուեց փոխադրել Անիէն պրոֆ. Մառի պեղումների արդիւնքը հանդիսացող արժէքաւոր հնութիւնները» (Նժդեհ 2006, 430-431): Գ. Նժդեհի այս տողերից պարզ է դառնում, որ մինչև Ալեքսանդրապոլ անցնելը, նա Ալաջայի կոիվներով կարողացել է առժամանակ կասեցնել թուրքական բանակի սրընթաց առաջխաղացումը, ինչի շնորհիվ նահանջող հայկական զորքերը և գաղթականությունը հնարավորություն են ունեցել անկորուստ հասնել Ալեքսանդրապոլ: 1950-ական թթ. վերջին գերմանական իշխանությունների խնդրանքով Ալֆրէդ Մուրադեանը (Համբարձումեան 2001, 39)[4] մի տեղեկատվության մեջ գրում է. «Երբ Ռուսաստանում հեղափոխությունից հետո ռուս զինվորները Լենինի կոչով մերկացրին ճակատը, հայկական փոքրաթիվ կամավորական ջոկատները չկարողացան պահել ճակատը, և նահանջեցին: Թուրքերը հասան մինչև Այսրկովկասի ռուս-թուրքական սահմանը: Այդ ժամանակ Նժդեհն իր զինակիցներով մտնում էր հայկական գյուղերը, …ազդեցիկ ճառերով …բնակչության որոշ մասին ոգևորում-ուղարկում ճակատ: Իր զինակիցների հետ մտնելով եզդիական մի գյուղ, …հրաշունչ ճառով համախմբում է իր շուրջը և 250 զինված եզիդների գլուխն անցած տանում է ճակատ» (Համբարձումեան 2001, 38-39): Ականատեսներից մեկը հետագայում վկայում է. «Տաճիկները մոտենում էին Կարսին: …Երբ մերոնք թողին Կարսն ու նահանջեցին, նահանջեց և Նժդեհն՝ ...ապահովելով մեր նահանջող զորքի ձախ թևը, որի շնորհիվ թշնամին չկարողացավ մեր զորքի ճանապարհը կտրել, գերել կամ կոտորել» (Համբարձումեան 2001, 39): Այս զույգ վկայությունները հաստատում են Գ. Նժդեհի ինքնակենսագրականում նշված տողերի իսկությունը: 1918 թ. գարնանը Գ. Նժդեհն իր զինակիցներով եղել է Անիի մոտակայքում և ապահովել նահանջողների անվտանգությունը, ինչպես նաև իր մարդկանց հետ միասին օգնել է պրոֆեսոր Ն. Մառի հնագիտական պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունները անվնաս փոխադրել Անիից:

Նիկողայոս Մառի Անիի պեղումները

Ն. Մառն Անիում հնագիտական պեղումները սկսել է 1892 թ. Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովի հանձնարարությամբ (Ծերեթյան 2011, 146): Հայաստանում ականավոր գիտնականի հնագիտական պեղումների պսակը հանդիսացող Անիի պեղումներն ընթացել են երկու փուլով՝ 1892-1893 թթ., ապա ընդհատումից հետո վերսկսելով 1904 թ., շարունակվել են մինչև 1916 թ. (Առաքելյան 1965, 129): Գիտական արշավախմբի կազմում էին Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Ն. Բունիաթյանը, Ա. Քալանթարը, Ն. Տոկարսկին, Տ. Տեր-Վարդանյանը, Ա. Վրույրը և ուրիշներ (ՀԺՊ 1981, 921): Անիում Ն. Մառը պեղեց և ուսումնասիրեց քաղաքի միջնաբերդն իր պարիսպներով, Բագրատունիների հսկա պալատի, բաղնիքի, եկեղեցիների ավերակները, գլխավոր փողոցը, քաղաքի աղքատ թաղամասերը և այլն (Առաքելյան 1965, 129): 1904 թ. Մանուչեի

4 1942 թ. Բեռլինում հիմնված Հայոց ազգային խորհրդի անդամ: Տես Համբարձումեան 2001, 39:

մզկիթը դարձվեց թանգարան: 1908 թ. հարկ եղավ նոր՝ հատուկ թանգարան կառուցել (Օրբելի 1911ա, 574): Պեղումների արդյունքում հայտնաբերված բոլոր նյութերը պահվում էին տեղի թանգարան(ներ)ում: Մանուչեի մզկիթում զետեղված թանգարանի առաջին մասում պահպանվում էին պեղումներից հայտնաբերված զարդեր, հանդերձանքների հատվածներ, պատերազմական զգեստների մնացորդներ, զենքեր, խեցեղեն, շքեղ հախճապակի, մետաղե իրեր և թանկարժեք սպասք, եկեղեցական գույք, կշռաքարեր, երկրագործական առարկաներ և այլ բազմաթիվ ու բազմաբնույթ իրեր (Օրբելի 1911բ, 658-663): Գագիկ թագավորի ավելի քան երկու մետր բարձրությամբ արձանը նույնպես պահվում էր Անիի թանգարանի առաջին բաժնում: Անիի հնագիտական արշավախմբի անդամ Հ. Օրբելին 1911 թ., խոսելով թագավորի արձանի մասին, գրում է. «Թագավորը ներկայացված է կարմիր խալաթով, կրծքին խաչ, խալիֆի ընծայած մեծ, ճոխ փակեղով (չալմա) և յուր կառուցած տաճարի մանրադիրը ձեռքին: Գագիկի մորուքավոր դեմքը ուժի և լրջության արտահայտություն ունի: Արձանը պահվում է Անիի թանգարանում» (Օրբելի 1911ա, 578): Թանգարանի երկրորդ բաժանմունքում, որը գտնվում էր թանգարանի համար կառուցված շինության մեջ, պահվում էին ճարտարապետական մասեր, քանդակավոր քարեր և խաչքարեր, հայերեն, արաբերեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն արձանագրություններ և այլն (Օրբելի 1911բ, 663): Թանգարանի երրորդ բաժանմունքում պահվում էր մի մեծ սայլ՝ հեծյալի և երկու հետևակների ուռուցիկ քանդակապատկերներով: Հ. Օրբելին այն բնորոշում է այսպես . «Գեղարվեստի մի գերազանց արտադրություն է այս. լի ուժով, գեղեցկությամբ, մանավանդ ձիու քանդակում, և պետք է վերագրվի Անիի կյանքի հնագույն շրջանին-Կամսարականների տիրապետության ժամանակին» (Օրբելի 1911բ, 663-664): Անիի հնագիտական արշավախմբի նյութերի զգալի մասը (լուսանկարներ, գծագրեր, օրագրեր և այլն) կորել է 1917 թ. (Բորոխյան 2017, 154-155)[5]: Թեպետ որոշ տեղերում, իբրև հնագիտական աշխատանքների վերջին տարի, նշված է 1916 թ., սակայն ուսումնասիրությունները շարունակվել են մինչև 1917 թ.: Արշավախմբի անդամ, լուսանկարիչ Արտաշես Վրույրը հետագայում իր «Անիում» աշխատության մեջ նշում է. «Ըստ պրոֆեսորի ծրագրի 1918 թ. պիտի սկսվեր Անիի այդ խոշորագույն շենքի՝ Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները: Ավարտվեց Անիի 16-րդ գիտարշավը: Երկիրը վերստին խառնվեց: Թուրքերը խուժեցին մեր երկիրը… Եվ 1917 թ. դարձավ Ն. Յա. Մառի գիտարշավների վերջնակետը» (Վրույր 1979, 102):

Անիի հնագիտական հավաքածուի հետագա ճակատագիրը

1918 թ. գարնանը Անիի թանգարանի հնագիտական նյութերի մեծ մասը ոչնչացվեց թուրքերի կողմից, և միայն փոքր մասը հնարավոր եղավ փրկել: «Թուրքերի նվաճման հետևանքով ոչնչացվեցին Անիի ինստիտուտն ու հնադարանը իր

5 Ն. Մառը դրանք Պետրոգրադից ուղարկել է Թիֆլիս՝ Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտ՝ արխիվ ստեղծելու նպատակով, սակայն տեղ չեն հասել (տես Բորոխյան 2017, 154-155): Նյութերը տեղափոխող գնացքը թուրքերի կամ կովկասյան թաթարների կողմից ռմբակոծվել և թալանվել է «Շամխոր կայարանում» (տես Платонова 1998, 377):

հազարավոր ցուցանմուշներով: Հաջողվում է մի կերպ փրկել միայն ցուցանմուշների մի չնչին մասը և վիմագիր արձանագրությունների ընդօրինակությունները …Այդ մասնակի էվակուացումը և նյութերի փրկությունը գերազանցապես կապված են Ա. Քալանթարի և Հ. Օրբելու անվան հետ»,- գրում է պրոֆեսոր Թադևոս Հակոբյանը (Հակոբյան 1988, 311): Անվանի հնագետ Աշխարհբեկ Քալանթարը 1918 թ., Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի հանձնարարությամբ, թուրքական զորքերի Անի մտնելու ժամանակ, մի քանի լոռեցի զինվորների հետ կազմակերպում է մոտ 6000 հնագիտական իրերի տեղափոխումը Անիից (Բայրամյան 2017, 136; Համբարձումյան և այլք 1974, 411; Քալանթար 2007, 16): Թուրքական վայրագ զորքերի արշավանքի հետևանքով Անիի թանգարանը կործանվեց ու ոչնչացավ (Սարյան 1966, 52; Հակոբյան 1988, 311; Платонова 1998, 377-378): Թանգարանում մնացած հնագիտական իրերի որոշ պատառիկներ հետագայում հիշատակվում են նախ Կարսի թանգարանում, ապա խոսվում է դրանց Մշո Առաքելոց եկեղեցի տեղափոխելու մասին (Հակոբյան 1988, 315): Անհայտ մնաց նաև Գագիկ թագավորի հռչակավոր արձանի ճակատագիրը: Հայտնի է, որ 1920-ական թթ. Ա. Քալանթարին հաջողվում է կրկին այցելել Անի, որտեղ նա նկարում է թանգարանի շենքերի ներքին անմխիթար վիճակը (Քալանթար 2007, 39): Այդ լուսանկարները գտնել մեզ չհաջողվեց, սակայն Ա. Վրույրի հուշերում կարդում ենք. «Ահա թե ինչ է ասում լուսանկարը: Քարեղարանի տանիքը, լուսամուտները, դռներն ու հատակի տախտակները և բազմաթիվ դարակներ չկան… Անողոքաբար հափշտակված են հարևան գյուղերի թուրք բնակիչների կողմից, որի հետևանքով խառնիխուռն թափված են երբեմնի մեծ խնամքով հավաքված և դարակների վրա դարսված քանդակազարդ բեկորներ և արձանագրված քարեր: Նույն վիճակին էր դատապարտված նաև հնադարանը» (Վրույր 1979, 17):

Գ. Նժդեհի ռազմական օգնության շնորհիվ՝ Ա. Քալանթարի խմբի կողմից փրկված նյութերը նախ տարվում են Ալեքսանդրապոլ: Ահա թե ինչպես է ներկայացնում Ա. Վրույրն այդ տարհանումը. «1918 թվին Աշխարհբեկը լոռեցիներից կազմում է մի բրիգադ և մեկնում Անի՝ կորստից փրկելու Անիի հնադարանի էքսպոնատները, որոնց տեղափոխման համար նախօրոք ապահովում է մի բեռնատար վագոն Անի կայարանում: Լոռեցիների զինված այդ խումբը Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարի գլխավորությամբ մտնում է Անի, որտեղից ուսերի վրա մոտ երեք վերստ Անիի հնադարանի էքսպոնատներն ու այլ իրեր Ախուրյանի ձորով սկսում են կրել դեպի Խարկով գյուղը և ապա սայլով տեղափոխում Անի կայարան: Սակայն այդ անձնազոհ խմբին չհաջողվեց լրիվ ավարտել աշխատանքը: …Միայն հայրենիքի հանդեպ ունեցած վառ սերն ու անձնվիրությունը կարող էր այդ խանդավառ խմբի անդամներին տալ ուժ ու կարողություն իրենց երկրի պատմական մշակույթի արժեքները Ախուրյանի ձորի նեղ կածաններով, ուսերի վրա տեղափոխելու դժվարին գործը կատարել: Գովելի է Աշխարհբեկ Քալանթարի այդ նախաձեռնությունը: Եվ այժմ, երբ մենք տեսնում ենք մեր պատմական թանգարանում Անի քաղաքին վերաբերյալ հնագիտական իրեր, այդ ամենի համար պարտական ենք նրան» (Վրույր 1979, 16): Այս իրադարձությունը տեղի է ունեցել 1918 թ. ապրիլի 25-ից մայիս 15-ի ընթացքում, քանզի ապրլի 25-ին Կարսն արդեն

հանձնված էր թուրքերին, իսկ մայիսի 15-ին թուրքական զորքերը հասել էին Ալեքսանդրապոլ (Սիմոնյան և այլք 2012, 514-515)։ Փրկված առարկաները հետագայում տարվել են Հայաստանի պատմության թանգարան և ներկայումս գտնվում են այնտեղ։ Ուշագրավ է, որ 1982 թ. Հայաստանի պատմության պետական թանգարանի հրատարակած «Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները» աշխատության առաջաբանում նշված է, որ հավաքածուն ընդգրկում է նյութերի այն մասը, որը պրոֆեսոր Ա. Քալանթարի և ուսուցիչ Հովսեփ Գալստյանի կողմից փրկվել և տեղափոխվել է Սանահինի վանք, որտեղից էլ հետագայում հանձնվել թանգարանին (Մուշեղյան 1982, 3)։ Այս վկայությունը համադրելով 1918 թ. մայիսին Ալեքսանդրապոլից հայոց զորքերի նահանջի ուղղությունների հետ՝ պարզ է դառնում, որ այդ ընթացքում Ա. Քալանթարը լոռեցիների հետ հնագիտական իրերը հասցնում է Ղարաքիլիսա (Վանաձոր), ապա՝ Սանահինի վանք։ Հայտնի է, որ միաժամանակ Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ՝ Գ. Նժդեհն իր խմբով նահանջում է Ղարաքիլիսա։ Հետագայում, երբ Մայիսյան փառահեղ դյուցազնամարտերի արդյունքում վերածնվում է հայոց անկախ պետականությունը, Սանահինի վանքից Անիի հնագիտական պեղումների արդյունքը հանդիսացող անգին հնությունները փոխադրվում են Երևան և հանձնվում Հայաստանի պատմության թանգարանին՝ իբրև հայոց հոչակավոր մայրաքաղաքի երբեմնի փառքի լուռ, սակայն շատ խոսուն վկաներ։ Հավաքածուն ներկայացնում է կարմրափայլ և ջնարակազարդ խեցեղենի նմուշներ, ոսկեթել գործվածքի նմուշներ, բրոնզե բուրվառներ, խաչեր, աշտանակներ և ծիսական այլ առարկաներ, տեղական և ներմուծված բրոնզե կենցաղային առարկաներ և այլն բազմաբնույթ իրեր (Մուշեղյան 1982, 3)։

Գարեգին Նժդեհը պատմամշակութային հուշարձանների պաշտպան

Զորավար Գ. Նժդեհը մեծապես կարևորել է պատմամշակութային հուշարձանները՝ մշտապես ձգտելով ռազմական գործողությունների ժամանակ պաշտպանել և պահպանել դրանք, ինչի մասին փաստող բազմաթիվ օրինակներ կան, ինչպես. «Հարուստ է Սյունյաց աշխարհը հինավուրց վանքերով ու բերդերով. կիսավեր ու փլատակ սրբավայրեր, որոնք դարեր շարունակ թուրքի համար ախոռի և դարմանանոցի տեղ էին ծառայում …Իմ զինվորը չէր կարող այլևս անտարբեր անցնել իր երկրի պատմական հիշատակների մոտով։ Եվ հենց այդ թուլության մեջ էր նրա անպարտելի ուժը» (Նժդեհ 2017, 27-28)։ Իր աշխատություններում Գ. Նժդեհը բազմիցս գովերգել է Անիի փառքն ու մեծությունը. «Անիի վսեմաշուք ավերակները խոսում են հայ ճարտարապետական հանճարի և գեղագիտական բարձր ճաշակի մասին…։ Անի՛ն, մեր անցյալը խորապես պեղելով միայն կարելի է ճանաչել մեր ցեղը։ Անի՛ն, մեկը մեր ցեղային հանճարի հսկա գործերից, փլատակ է այսօր, անցյալ փառքերի ու մեծության փլատակ…» (Նժդեհ 2006, 377, 599)։

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի և հոկտեմբերի 13-ին Կարսի ռուս-թուրքական պայմանագրերով Անին հանձնվեց Թուրքիային և դարձավ կորսված հայրենիքի

մի բեկոր: Սակայն արդիական են մնում Զորավար Գ. Նժդեհի մարգարեական խոսքերը. «Մեկի հայրենի հողը չի կարող մյուսի համար մնայուն հայրենիք դառնալ, դա Հավիտենական Արդարության Օրենքի ուժով վաղ թե ուշ վերադարձվում է իր տերերին, եթե այդ վերջինների մեջ չի նվազել սերը դեպ հարազատ երկրամասը» (Նժդեհ 2014, 57):

Եզրակացություն

Այսպիսով, Գ.Նժդեհի հիշատակությունը կարևոր աղբյուր է 1918 թ. գարնանը Անիում ծավալվող իրադարձությունները քննելու համար: Գ. Նժդեհի ռազմական օգնության և Աշխարհբեկ Քալանթարի համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց Ալեքսանդրապոլ տեղափոխել Անիի հնագիտական թանգարանի նյութերի մի մասը: Նյութերը Ալեքսանդրապոլից նահանջի պատճառով փոխադրվեցին Ղարաքիլիսա՝ Սանահինի վանք, հետագայում բերվեցին պատմության թանգարան: Գ. Նժդեհի շնորհիվ փրկվեցին ոչ միայն Անիի հնագիտական նյութերը, այլև ողջ տարհանող անձնակազմը, նահանջող զինվորները, գաղթականությունը: Հայոց պետական և ռազմական գործիչ Գ. Նժդեհը մեծապես կարևորել և ամեն գնով ձգտել է պաշտպանել պատմամշակութային հուշարձանները, ինչն ակնհայտ է նրա երկերում և ռազմական գործողություններում՝ Անիից մինչև Սյունիք-Լեռնահայաստան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1965 - Առաքելյան Բ. Ն., Նիկողայոս Մառ (ծննդյան 100-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1965, № 1, 126-136:

ԲԱՅՐԱՄՅԱՆ 2017 - Բայրամյան Կ. Ս., Աշխարհբեկ Քալանթարի ավանդը Զվարթնոց պատմահնագիտական վայրի կայացման գործում, Էջմիածին, Վաղարշապատ, 2017, թիվ Զ, 133-150:

ԲՈԲՈԽՅԱՆ 2017 - Բոբոխյան Ա., Նիկողայոս Մառի արխիվը Սանկտ-Պետերբուրգում, Էջմիածին, Վաղարշապատ, 2017, թիվ Ա, 152-167:

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ 1999 - Խուրշուդյան Լ. Ա, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն ու դասերը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1999, № 2-3, 27-38:

ԾԵՐԵԹՅԱՆ 2011 - Ծերեթյան Կ., Նիկողայոս Մառի հնագիտական գործունեությունը Հայաստանում, Պատմամշակութային ժառանգություն, հ. 6, Երևան, 2011, 143-152:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2002 - Կարապետյան Մ. Լ., Հայերի մասնակցությունը առաջին աշխարհամարտին կովկասյան ճակատում և կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2002, № 5, 33-42:

ՀԱԿՈԲՅԱՆ 1988 - Հակոբյան Թ. Խ., Անի մայրաքաղաք, Երևան, 1988:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 1986 - Հակոբյան Թ. Խ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 1998 - Հակոբյան Թ. Խ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1998:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ 2001 - Համբարձումեան Ռ. Հ., Վարք Նժդեհի, Երևան, 2001:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ և այլք 1974 - Համբարձումյան Վ. Հ. և այլք, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974:

ՀԺՊ 1981 - Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1982 - Մուշեղյան Ե. Ա., Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Երևան, 1982:

ՆԺԴԵՀ 2006 - Նժդեհ Գ. Ե., Ինքնակենսագրություն, Հատընտիր, Երևան, 2006:

ՆԺԴԵՀ 2014 - Նժդեհ Գ. Ե., Որդիների պայքարը հայրերի դեմ, Երևան, 2014:

ՆԺԴԵՀ 2017 - Նժդեհ Գ. Ե., Հիշիր պատերազմը, Երևան, 2017:

ՆԺԴԵՀ 2021 - Նժդեհ Գ. Ե., Ինքնակենսագրություն, Իմ պատասխանը, Երևան, 2021:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2016 - Պետրոսյան Գ. Հ, Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը (1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. փետրվար), Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2016, № 2 (20), 3-14:

ՍԱՐՅԱՆ 1966 - Սարյան Մ. Ս., Գրառումներ իմ կյանքից, գիրք 1, Երևան, 1966:

ՍԻՄՈՆՅԱՆ 2017 - Սիմոնյան Ա. Հ., Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., Երևան, 2017:

ՍԻՄՈՆՅԱՆ և այլք 2012 - Սիմոնյան Հր. Ռ. և այլք, Հայոց պատմություն, Երևան, 2012:

ՎՐՈՒՅՐ 1979 - Վրույր Ա. Ա., Անիում, Երևան, 1979:

ՔԱԼԱՆԹԱՐ 2007 – Քալանթար Ա., Հայաստան՝ Քարե դարից միջնադար. Երկերի ժողովածու, Երևան, 2007:

ՕՐԲԵԼԻ 1911 - Օրբելի Հ. Ա., Անիի աւերակները, հ. III, Արարատ, Էջմիածին, 1911, թիվ Է, 568-579:

ՕՐԲԵԼԻ 1911 - Օրբելի Հ. Ա., Անիի աւերակները, հ. V, Արարատ, Էջմիածին, 1911, թիվ Ը, 658-663:

ПЛАТОНОВА 1998 - Платонова Н. И, Николай Яковлевич Марр - археолог и организатор археологической науки, Археологические вести, Санкт-Петербург, 1998, № 5, 371-382.

Gor Ghazaryan

Yerevan State University
gor.ghazaryan1998@gmail.com

GAREGIN NZHDEH'S ROLE IN THE RESCUE OF NIKOLAY MARR'S ANI ARCHAEOLOGICAL EXCAVATION COLLECTION (1918)

Keywords: Garegin Nzhdeh, Nikolay Marr, Ashkharhbek Kalantar, excavations at Ani, archaeological finds, Alexandropol, heroic battles in May.

The life of Armenian statesman and military figure, politologist-philosopher and national ideologist Garegin Nzhdeh is full of many fascinating and remarkable events that need to be covered and publicized. Such an event is Nzhdeh's assistance to Professor Marr's archaeological expedition at Ani in 1918.

On the eve of the First World War, having been "pardoned" by the tsarist government, Nzhdeh returns to the Caucasus under the condition of participating in the war against Turkey. In 1918 in the spring, Nzhdeh conducted the battles of Alaca (a settlement in the vicinity of Ani), which enabled the retreating Armenian military units to reach to Alexandrapol (Gyumri) unscathed. Nzhdeh with his people also ensures the transportation of valuable antiquities found by Professor Marr's expedition at Ani. This important event is recorded in Garegin Nzhdeh's autobiography. "... and Arpachai (Akhuryan) I crossed only when my men with the last retreating Armenian soldiers managed to transport the valuable antiquities that are the result of Professor Marr's excavations at Ani.

This article presents the details of the above-mentioned event, as well as the future fate of the rescued archaeological finds. An attempt has been made to outline the important role of Garegin Nzhdeh in the safe transfer of valuable materials resulting from the excavations of Nikolay Marr atAni to Alexandrapol (Gyumri), as well as his appreciation and preservation of historical and cultural monuments and archaeological materials.

Гор Казарян

Ереванский государственный университет
gor.ghazaryan1998@gmail.com

РОЛЬ ГАРЕГИНА НЖДЕ В СПАСЕНИИ КОЛЛЕКЦИИ АРХЕОЛОГИЧЕСКИХ РАСКОПОК АНИ НИКОЛАЯ МАРРА (1918)

Ключевые слова: Гарегин Нжде, Николай Марр, Ашхарбек Калантар, раскопки Ани, археологические находки, Александрополь, героические майские бои.

Жизнь армянского государственного и военного деятеля, политолога-философа и национального идеолога Гарегина Нжде насыщена многими увлекательными и замечательными событиями, которые необходимо освещать и предать гласности. Одно из таких событий помощь Нжде археологической экспедиции профессора Марра в Ани в 1918 г.

Накануне Первой мировой войны, будучи «помилованным» царским правительством, Нжде возвращается на Кавказ под условием участия в войне против Турции. В 1918 году весной Нжде ведет бои у Аладжи (населенный пункт в окрестностях Ани), что позволило отступающим армянским военным частям без потерь переправиться в Александрополь (Гюмри). Нжде со своими людьми также обеспечивает перевозку ценных древностей, найденных экспедицией профессора Марра в Ани. Этот важный факт зафиксирован в автобиографии Гарегина Нжде. "... и из Арпачай (Ахурян) я переправился только тогда, когда моим людям, вместе с последними отступающими армянскими солдатами удалось переправить из Ани ценные древности, являющиеся результатом раскопок профессора Марра.

В данной статье представлены подробности вышеупомянутого события, а также дальнейшая судьба спасенных археологических материалов.Сделана попытка выявить важную роль Гарегина Нжде в безопасном перемещении ценных материалов, полученных в результате раскопок Николая Марра в Ани в Александрополь (Гюмри), а также его оценку и сохранение историко-культурных памятников и археологических материалов.